ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2439-Ա « 01 » հուլիսի 2024 թ.

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԲԱՑ ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 4-րդ մասով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով.

1. Հրաժարվել 2024 թվականի մայիսի 29-ին հրապարակված հողամասերի բաց դասական աճուրդից:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության պետին՝ վերադարձնել 2024 թվականի մայիսի 29-ին հրապարակված հողամասերի բաց դասական աճուրդին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից Երևանի քաղաքապետարանի հ.հ. 900015211411 և 900015211403 հաշվեհամարներին վճարված նախավճարները և մասնակցության վճարները:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչությանը՝ սույն որոշման մասին տեղեկատվությունը տարածել մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման և ֆինանսական վարչությունների պետերի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ